«Փըրֆեքթ Աուդիտ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

2023 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա

Ֆինանսական հաշվետվություններ

Բովանդակություն

	Էջ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	3
Համապարփակ Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	5
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	6
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	7
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	8

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

"000 դրամ

ԱԿՏԻՎ	ծնթգ.	31.12.23թ.	31.12.22թ.
1. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4.1	7,355	8,621
Ոչ նյութական ակտիվներ	4.2		
Հետաձգված հարկային ակտիվ		182	155
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**7,537**	**8,776**
2. Ընթացիկ ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	4.3	19,962	6,102
Ընթացիկ շահութահարկի գծով կանխավճար		1,025	
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4.4	8,129	30,423
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**29,116**	**36,525**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**36,653**	**45,301**
ՊԱՍԻՎ			
1. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի զուտ գումար	4.5	50	50
Կուտակված շահույթ		29,227	28,676
Ընդամենը սեփական կապիտալ		**29,277**	**28,726**
2. Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		-	-

3. Ընթացիկ պարտավորություններ

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4.6	7,376	16,362
Շահութահարկի գծով պարտավորություն			213
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**7,376**	**16,575**
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**36,653**	**45,301**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 29 մարտի 2024թ.

Տնօրեն-բաժնետեր Ա. Բաբայան

Գլխավոր հաշվապահ Ե. Բաբայան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 25-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

2023 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

'''000 դրամ

Ցուցանիշի անվանումը	**ծնթգ**	**31.12.23թ.**	**31.12.22թ.**
Շարունակվող գործունեությունից			
Հասույթ	4.7	66,209	60,796
Վաճառքի ինքնարժեք	4.8	(51,448)	(38,725)
Համախառն շահույթ (վնաս)		14,761	22,071
Այլ եկամուտներ	4.9	1,222	2
Վարչական ծախսեր	4.10	(13,685)	(11,228)
Այլ ծախսեր	4.11	(1,585)	(1,605)
Ֆինանսական ծախսեր			
Այլ ոչ գործառնական ծախսեր			(2,310)
Շահույթ (վնաս) մինչև հարկումը		713	6,930
Շահութահարկի գծով ծախս		(162)	(1,355)
Տարվա շահույթ(վնաս) շարունակվող գործունեությունից		**551**	**5,575**
Ընդհատված գործունեության զուտ շահույթ (վնաս)			
Ընդամենը տարվա շահույթ (վնաս)		**551**	**5,575**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունքներ		**551**	**5,575**

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 25-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**50**	**61 001**	**61 051**
Շահաբաժիններ	-	(37 900)	(37 900)
2022թ. տարվա շահույթ	-	5 575	5 575
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**50**	**28 676**	**28 676**
2023թ. տարվա շահույթ	-	551	551
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**50**	**29 227**	**29 227**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 25-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

		"000 դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր	**2023թ.**	**2022թ.**
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից	76 291	74 886
Գործառնական այլ գործունեությունից	228	
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	**76 519**	**74 886**
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Նյութերի, ապրանքների ձեռք բերման գծով	7 136	4 324
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով ելքեր	31 368	24 191
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	28 141	17 119
Վճարումներ բյուջեին	20 362	22 246
Վճարումներ զինծառայողների ապահովագրության հիմնադրամին	515	256
Գործառնական այլ գործունեությունից ելքեր	3 366	2 218
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	**90 888**	**70 354**
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(14 369)**	**4 532**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Ֆինանսական ակտիվներով գործառնություններից	9 593	48 871
Ոչ ընթացիկ նյութական ակտիվների օտարումից		9 240
Սեփական կապիտալի գործիքների թողարկումից և վերավաճառքից		
Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր	***9 593***	***58 111***
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման գծով	595	8 283
Ֆինանսական ակտիվների ձեռք բերումից	16 923	8 657
Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր	17 518	16 940
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(7 925)**	**41 171**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Ստացված վարկերից և փոխառություններից		22 500
ԸՆդամենը Ֆինանսական գործունեությունից մուտքեր	**0**	**22 500**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Ստացված վարկերի և փոխառությունների մարումից		21 300
Վճարված շահաբաժիններ և տոկոսներ		36 005
Ընդամենը ֆինանսական գործունեությունից ելքեր	**0**	**57 305**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**0**	**(34805)**
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր		
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	**30 423**	**19 525**
Դրամական միջոցների մնացորդը տարվա վերջին	**8 129**	**30 423**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 25-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. *Ընդհանուր տեղեկատվություն ընկերության մասին*

«Փըրֆեքթ Աուդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) աուդիտորական, խորհրդատվական կազմակերպություն է, որը ստեղծվել է Ընկերության հիմնադրի 2009 թ. մարտի 31-ի թիվ 1 որոշմամբ: Ընկերությունը գրանցվել է 2009 թվականի ապրիլի 2-ին և նույն թվականին ստացել է աուդիտորական գործունեության իրականացման թիվ ԱԾ-068 լիցենզիան: 2021 թ. հունվարի 1-ից աուդիտորական ընկերությունը ձեռք է բերել աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք այն ամսաթվից, երբ նրա մասին տեղեկությունները գրանցվել են մասնագիտացված կառույցի՝ Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների ռեեստրում:

Ընկերությունը ռեեստրում գրանցվել է 18/12/2020 թ-ին, ՀԳԳՀ՝ ԱԾ 1 20 0284:

Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝

- աուդիտորական ծառայություն,
- հաշվապահական հաշվառման վարում,
- հաշվապահական և հարկային խորհրդատվություն:

Ընկերության միակ մասնակից-բաժնետերն է 1998 թվականից որակավորված աուդիտոր Աղավնի Բաբայանը-100% մասնակցություն:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի պող., թիվ 7, իսկ գործունեության վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 4:

Ընկերության աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակը 2023 թ.-ին կազմել է 13, 2022 թ.՝ 13 աշխատակից:

2. Պատրաստման հիմունքները

2.1 Համապատասխանությունը ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ին

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՓՄԿ-ների ՖՀՄՍ) համապատասխան:

2.2 Անընդհատության սկզբունք

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա, ինչը ենթադրում է, որ ակտիվները կիրացվեն և պարտավորությունները կմարվեն բնականոն գործունեության ընթացքում՝ առանց որևէ մտադրության գործունեությունը տեսանելի ապագայում դադարեցնելու կամ լուծարելու:

2.3 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են չափման սկզբնական արժեքի հիմունքով:

2.4. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն (դրամ) է, որը հանդիսանում է Ընկերության ֆունկցիոնալ արժույթը: Դրամով ներկայված ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է հազարների ճշտությամբ,առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

2.5.Դատողությունների, գնահատումների և ենթադրությունների կիրառում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ համապատասխան կազմման համար Ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև պայմանական պարտավորությունների և ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

3. Նշանակալի հարցերի նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս նշանակալի հարցերի նկատմամբ կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

Ներկայացման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները կազմված են համաձայն ՓՄԿ -ի ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ ՓՄԿ- ների ՖՀՄՍ) և կիրառվում է սկզբնական արժեքի հիմունքը բացառությամբ, որոշ վերագնահատված ակտիվների և ֆինանսական գործիքների: Սկզբնական արժեքը ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչման պահին վճարված (վճարվելիք), ստացված (ստացվելիք) դրամական միջոցների չափն է, իսկ ոչ դրամային հատուցման դեպքում՝ հատուցման իրական արժեքը:

Ստորև ներկայացված են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիր.

3.1 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը

ա) Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություններում ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են առանձին:

բ) Համապարփակ ֆինանսական արդյունքների և չբաշխված շահույթների մասին հաշվետվությունում ծախսերը ներկայացվում են ըստ գործառնության դասակարգմամբ:

գ) Տարվա ընթացքում սեփական կապիտալի փոփոխությունները առաջացել են միայն շահույթից ու շահաբաժինների վճարումից:

դ) Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը կազմվում և ներկայացվում է ուղղակի մեթոդով:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններում տոկոսների գծով ներհոսքերն ու արտահոսքերը դասակարգվում են համապատասխանաբար որպես ներդրումային գործունեությունից ներհոսքեր և ֆինանսավորման գործունեությունից արտահոսքեր:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններում շահաբաժինների գծով ներհոսքերն ու արտահոսքերը դասակարգվում են համապատասխանաբար որպես ներդրումային գործունեությունից ներհոսքեր և ֆինանսավորման գործունեությունից արտահոսքեր:

ե) Ծանոթագրությունները բաղկացած են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագրից և այլ բացատրական տեղեկատվությունից:
Ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում է միայն մեկ / նախորդ/ տարվա համադրելի տեղեկատվությունը:

Ֆինանսական հաշվետվություններում էական տեղեկատվությունը ներկայացվում է առանձին:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների բոլոր դասերը հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

Մաշվածության մեթոդը արտացոլում է այն մոդելը, որով ընկերությունը ակնկալում է սպառել ակտիվի տնտեսական օգուտները: Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

- Մարդատար ավտոմեքենաներ 8 տարի,
- Տնտեսական և գրասենյակային գույք 5-8 տարի,
- Համակարգչային տեխնիկա 8 տարի:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով ՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:
Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը որ նյութական ակտիվի գնահատված ժամկետի ընթացքում:

3.4 Վարձակալված ակտիվներ

Վարձակալության գծով վճարները գծային հիմունքով ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:
Վարձակալության հետ կապված ծախսերը՝ պահպանման և ապահովագրության,ծախսագրվում են իրականացման պահին:

3.5 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով «Առաջին մուտք առաջին ելք» /ԱՄԱԵ/ բանաձևը և ներառում է ձեռբերման արժեքը, վերամշակման ծախսումները և այլ ծախսումները, որոնք անհրաժեշտ են պաշարները գտնվելու վայր հասցնելու և վիճակի բերելու համար:

3.6 Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները, որոնք անմիջականորեն վերագրելի են որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, կազմում են այդ ակտիվի արժեքի մաս: Այլ փոխառության ծախսումները ճանաչվում են որպես ծախս:

Այն ակտիվն է համարվում որակավորվող, որին անհրաժեշտ է զգալի ժամանակահատված (սովորաբար 6 ամսից ոչ պակաս) որպեսզի այն պատրաստ լինի ըստ նշանակության օգտագործման կամ վաճառքի համար:

Փոխառության ծախսումները կարող են չկապիտալացվել, երբ շարունակական հիմունքով արտադրվող պաշարների անկախ արտադրական պրոցեսի տևողությունից և կենսաբանական ակտիվի հետ են կապված:

Կապիտալացվող փոխառության ծախսումները նվազեցվում են բացառապես որակավորվող ակտիվ ձեռքբերելու նպատակով ստացված փոխառու միջոցների ժամանակավոր ներդրումներից ստացված եկամուտների չափով:

3.7 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցների և դրանց համարժեքների բաղկացուցիչներ են համարվում դրամական միջոցները դրամարկղում, դրամական միջոցները ճանապարհին, ցպահանջ հաշիվների մնացորդները, մինչև 3 ամիս մարման ժամկետով հեշտ իրացվելի և ցածր ռիսկային ֆինանսական ներդրումների մնացորդները, ինչպես նաև բանկային օվեդրաֆտները: Վերջիններիս մնացորդները արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ընթացիկ պարտավորություններ բաժնում:

3.8 Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսը ներկայացվում է վճարման ենթակա ընթացիկ հարկի և հետաձգված հարկի հանրագումարը:
Վճարման ենթակա ընթացիկ հարկը հիմնված է տարվա հարկվող շահույթի վրա: Հետաձգված հարկը ճանաչվում է ակտիվների և պարտավորությունների ֆինանսական հաշվետվություններում ճանաչված հաշվեկշռային արժեքների և դրանց համապատասխան հարկային բազաների միջև տարբերությունների գծով (ժամանակավոր տարբերություններ): Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք ակնկալվում է, որ ապագայում կավելացնեն հարկվող շահույթը: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են բոլոր ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք ակնկալվում է, որ ապագայում կնվազեցնեն հարկվող շահույթը, ինչպես նաև՝ ցանկացած չօգտագործված հարկային կորուստների կամ չօգտագործված հարկային զեղչերի գծով: Հետաձգված հարկային ակտիվները չափվում են ամենաբարձր գումարով, որը, ընթացիկ կամ գնահատված ապագա հարկվող շահույթի հիման վրա, ավելի շատ հավանական է, քան՝ ոչ, որ կփոխհատուցվի:
Հետաձգված հարկային ակտիվների զուտ հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճշգրտվում է ապագա հարկվող շահույթների ընթացիկ գնահատականն արտացոլելու նպատակով: Ցանկացած ճշգրտում ճանաչվում է շահույթում կամ վնասում:
Հետաձգված հարկը հաշվարկվում է հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում են, որ կկիրառվեն այն ժամանակաշրջանների հարկվող շահույթի (հարկային վնասի) նկատմամբ, որոնց ընթացքում ակնկալվում է, որ հետաձգված հարկային ակտիվը կիրացվի կամ հետաձգված հարկային պարտավորությունը կմարվի կիրառելով այն հարկային դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջին:

3.9 Հասույթ

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Ընկերության հասույթը առաջանում է աուդիտորական, հաշվապահական և խորհրդատվական ծառայություններից: Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հասույթը ներկայացվում է զեղչերի, հետ վերադարձի և քանակային զիջումների ազդեցության ճշգրտված գումարով:

Վաճառքից հասույթը ճանաչվում է այն պահին, երբ փոխանցվում են սեփականության հետ կապված նշանակալի ռիսկերն ու հատույցները, ակընկալվում է տնտեսական օգուտների ներհոսք, ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել, չի պահպանվում վերահսկողություն ապրանքների նկատմամբ և հասույթի գումարը հնարավոր է արժանահավատորեն չափել:

3.10 Պահուստներ

Պահուստները ճանաչվում են, երբ որպես անցյալ դեպքերի արդյունք կազմակերպությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, որը հնարավոր է արժանահավատորեն չափել և որը կատարելու համար պահանջվում է տնտեսական օգուտների արտահոսք:

Երաշխիքների և անբարենպաստ պայմանագրերի գծով պահուստները չափվում են պարտականությունը կատարելու համար անհրաժեշտ միջոցների իրական արժեքի լավագույն գնահատականի հիման վրա՝ ելնելով անցյալ փորձից և ապագա ակընկալիքներից: Գնահատումը կատարվում է տնօրենի հրամանով կազմված հանձնաժողովների կողմից:

Ապատեղակայման և տեղանքի բարեկարգման գծով պահուստները չափվում են գնահատված գումարի ներկա արժեքով, եթե պահուստի ժամկետը գերազանցում է 5 տարին: Այսպիսի դեպքերում որպես զեղչման դրույք սովորաբար համարվում է կազմակերպության լրացուցիչ փոխառություն ներգրավվելու տոկոսադրույքը:

Արձակուրդային վճարների և հավանական պարգևավճարների գծով պահուստները գնահատվում են յուրաքանչյուր ամսվա վերջում ելնելով ընթացիկ և սպասվող աշխատավարձերի գումարից, աշխատանքային օրենսդրության պահանջներից և այլ կանխատեսումներից: Զուգահեռ ստեղծվում է նաև պահուստ արձակուրդային վճարների կամ պարգևավճարների մասով գործատուի կողմից կատարվելիք սոցիալական ապահովության վճարների համար:

3.11 Էական սխալներ

Էական սխալներ՝ ընթացիկ ժամանակաշրջանում բացահայտված սխալներ են, որոնք այնպիսի նշանակություն ունեն, որ նախորդ մեկ կամ ավելի ժամանակշրջանների ֆինանսական հաշվետվությունները չեն կարող այլևս արժանահավատ համարվել, իրենց ներկայացման թվի դրությամբ:

Նախորդող ժամանակաշրջաններին վերաբերող էական սխալների ուղղման գումարը պետք է արտացոլվի հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվությունում, ճշտելով չբաշխված շահույթի սկզբնական մնացորդը:

3.12 Ֆինանսական գործիքներ

Բոլոր ֆինանսական ակտիվները ու ֆինանսական պարտավորությունները սկզբնական ճանաչման պահին չափվում են իրական արժեքով և դասակարգվում են հետևալ կատեգորիաներում՝ ելնելով գործարքի նպատակից և ղեկավարության ակընկալիքներից.

Ֆինանսական ակտիվներ

- Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ,
- Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ,
- Տրամադրված փոխառություններ և դեբիտորական պարտքեր,
- Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ:

Ֆինանսական պարտավորություններ

- Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ,
- Այլ ֆինանսական պարտավորություններ:

Կանոնավոր կերպով գնումների և վաճառքների դեպքում ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ճանաչվում կամ ապաճանաչվում են առևտրի ամսաթվին:

Վարկերի և փոխառությունների գծով ֆինանսական ակտիվները ու պարտավորությունները ճանաչվում են դրանց տրամադրման ամսաթվին:

Ֆինանսական գործարքի հետ կապված ծախսումները ներառվում են համապատասխան ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական արժեքում, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և պարտավորությունների, որոնք չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Վերջիններիս դեպքում դրանք ճանաչվում են որպես ընթացիկ ժամանակաշրջանի ծախս:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը որոշվում է շուկայի հիման վրա: Սակայն պարտքային գործիքի շուկայի բացակայության դեպքում իրական արժեքը հաշվարկվում է որպես սպասվող հոսքերի ներկա արժեք որոշված նմանատիպ գործիքի միջին շուկայական տոկոսադրույքով: Այն դեպքերում, երբ ֆինանսական գործարքի տոկոսադրույքը տարբերվում է նմանատիպ ֆինանսական գործիքի միջին շուկայական տոկոսադրույքից, սակայն տարբերությունը չի գերազանցում շուկայական դրույքի 20%-ը, ապա ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական արժեքը համարվում է ճանաչման օրվա դրությամբ իրական արժեք:

Անտոկոս կամ ցածր տոկոսով ստացված ցպահանջ վարկերի և փոխառությունների իրական արժեք է համարվում վարկի կամ փոխառության անվանական արժեքը, քանի որ դրանք ենթակա են մարման ցանկացած պահին՝ հնարավորության առկայության դեպքում, և կազմակերպության ղեկավարությունը ակընկալում է մարել դրանք շատ կարճ ժամկետներում:

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը հաշվարկվում են արդյունավետ տոկոսադրույքով և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացվում են որպես ֆինանսական եկամուտ կամ ծախս, եթե չեն ներառվում որակավորվող ակտիվի ինքնարժեքում համաձայն ՀՀՄՍ 23-ի: Այնուամենայնիվ ֆինանսական հաշվետվություններում շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով հաշվարկված տոկոսները չեն առանձնացվում իրական արժեքի փոփոխությունից առաջացող օգուտից կամ վնասից:

Ֆինանսական ակտիվը և ֆինանսական պարտավորությունը հաշվանցվում են միայն այն դեպքում, երբ առկա է գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և ղեկավարությունը մտադիր է կամ հաշվարկը (մարումը) իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

3.13 Ֆինանսական գործիքների արժեզրկում

Ֆինանսական ակտիվների համար յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ դիտարկվում է որևէ արժեզրկման հայտանիշի առկայությունը: Ֆինանսական ակտիվները ենթակա են արժեզրկման, եթե սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի դեպքերը /արժեզրկման հայտանիշ/ վկայում են այն մասին, որ ֆինանսական ակտիվի գծով սպասվող դրամական ներհոսքերը կարող են անբարենպաստ փոխվել:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների արժեզրկումը հաշվարկվում է որպես հաշվեկշռային արժեքի և վերանայված դրամական հոսքերի զեղչված արժեքի, հաշվարկված սկզբնական տոկոսադրույքով, տարբերությունը:

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումը գնահատվում է հավաքական հիմունքով՝ ելնելով համանման պարտքային բնութագրեր ունեցող պարտքերի պատմական կորուստների փորձից:

Եթե հետագայում արժեզրկումից կորուստը նվազում է որպես հետևանք մի դեպքի, որը տեղի է ունեցել արժեզրկումը ճանաչելուց հետո, ապա նախկինում ճանաչված արժեզրկումից կորուստը ենթակա է հակադարձման, բացառությամբ որպես վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնային գործիքների:

3.14 Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններ

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը,բացառությամբ ստորև շարադրվածի, ճանաչվում է առաջընթաց՝ արտացոլվելով շահույթի կամ վնասի մեջ:
ա)փոփոխման ժամանակաշրջանում,եթե փոփոխությունն ազդում էմիայն տվյալ ժամանակաշրջանի վրա, կամ

բ)փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում,եթե փոփոխությունը երկուսի վրա էլ ազդում է:

3.15 Հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխություններ

Ընկերությունը պետք է փոփոխի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը միայն այն դեպքում, եթե այդ փոփոխությունը՝
ա) պահանջում է որևէ ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ով, կամ
բ) հանգեցնում է ֆինանսական հաշվետվություններում կազմակերպության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքի և դրամական հոսքերի վրա գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների ազդեցության վերաբերյալ առավել արժանահավատ և տեղին (ռելևանտ) տեղեկատվության ներկայացմանը:
Եթե Ընկերությունը հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է հետընթաց, ապա հաշվապահական հաշվառման նոր քաղաքականություն կիրառում է նախորդող ժամանակաշրջանների համադրելի տեղեկատվության նկատմամբ՝ հետ գնալով այնքան ժամանակաշրջան, որոնք քաղաքականության հետընթաց կիրառումը իրագործելի է: Հետընթաց կիրառությունը նախորդող ժամանակաշրջանի նկատմամբ իրագործելի չէ, քանի դեռ հնարավոր չէ որոշել այդ ժամանակաշրջանի ֆինանսական վիճակի մասին հաշվետվության սկզբնական և վերջնական մնացորդների կուտակային հետևանքը: Ճշգրտման հանրագումարը, որը վերաբերում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացված ժամանակաշրջաններին նախորդող ժամանակաշրջաններին, վերագրվում է ամենավաղ ժամանակաշրջանում ներկայացված սեփական կապիտալի յուրաքանչյուր ազդեցություն կրած բաղադրիչի սկզբնական մնացորդին: Սովորաբար, ճշգրտումը վերագրվում է չբաշխված շահույթին:
Երբ Ընկերության համար անիրագործելի է հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառել հետընթաց՝ բոլոր նախորդող ժամանակաշրջանների նկատմամբ նոր քաղաքականության կիրառման կուտակային հետևանքը որոշելու անկարողության պատճառով, ապա Ընկերությունը նոր քաղաքականությունը կիրառում է առաջընթաց՝ հնարավոր ամենավաղ ժամանակաշրջանից սկսած: Այդ դեպքում Ընկերությունը հաշվի չի առնում ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի՝ մինչ այդ ամսաթիվն առաջացող կուտակային ճշգրտման բաժինը: Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն թույլատրվում է, եթե նույնիսկ չէ այդ քաղաքականությունը առաջընթաց կիրառելի ցանկացած նախորդող ժամանակաշրջանի համար:

4.Բացահայտումներ էական հոդվածների վերաբերյալ

4.1 Հիմնական միջոցներ

000 դրամ

	Տրանսպորտային միջոցներ	Արտադրամեքենա կամ գույք	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**10 560**	**2 589**	**4 950**	**18 099**
Ավելացում	10 997	73	92	165
Նվազեցում	10 997	0	0	0
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**10 560**	**2 662**	**5 042**	**18 264**
Ավելացում			446	446
Նվազեցում		0	0	0
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**10 560**	**2 662**	**5 488**	**18 710**
Մաշվածություն				
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**2 899**	**2 147**	**2 823**	**7 869**
Տարվա մաշվածությունը այդ թվում	1 320	100	354	1 774
Նվազեցում	0	0	0	0
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4 219**	**2 247**	**3 177**	**9 643**
Տարվա մաշվածությունը այդ թվում	1 320	95	297	1 712
Նվազեցում	0	0	0	0
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5 539**	**2 342**	**3 474**	**11 355**
Զուտ հաշվեկշռային արժեք				
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**6 341**	**415**	**1 865**	**8 621**
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5 021**	**320**	**2 014**	**7 355**

2023թվականին հիմնական միջոցների ավելացումներն են՝

ՆՈԹԲՈՒՔ HP ENVY 446

Գրավադրված հիմնական միջոցներ չկան

Մաշվածությունը բաշխվել է արտադրական և վարչական ծախսերի միջև

4.2 Ոչ նյութական ակտիվներ

000 դրամ

	Լիցենզիա	Համակարգչային ծրագրեր	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**3 000**	**203**	**0**	**3 203**
Ավելացում			0	0
Նվազեցում	0	0	0	0
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3 000**	**203**	**0**	**3 203**
Ավելացում			0	0
Նվազեցում	0	0	0	0
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3 000**	**203**	**0**	**3 203**
Կուտակված մաշվածություն				
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**3 000**	**200**	**0**	**3 200**
Տարվա մաշվածությունը		3	0	3
Նվազեցում	0	0	0	0
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3 000**	**203**	**0**	**3 203**
Տարվա մաշվածությունը այդ թվում	0		0	
Նվազեցում				0
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**0**	**0**	**0**	**0**
Զուտ հաշվեկշռային արժեք				
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**0**	**0**	**0**	**0**
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**0**	**0**	**0**	**0**

2021 թվականի հունվարի 1-ից ընկերությունը ձեռք է բերում աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք այն ամսաթվից ,երբ նրա մասին տեղեկությունները գրանցվում են մասնագիտացված կառույցի՝ Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների ռեեստրում: Ընկերությունը ռեեստրում գրանցվել է 21/12/2020 թ-ին, ՀԳԳՀ՝ 1 20 0284:

4.3 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

000 դրամ

	31.12.2023	31.12.2022
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր, այդ թվում	**20 987**	**6 102**
1. Տրված կանխավճարներ	3 600	2
2. Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	6 564	1 363
3. Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	80	16
4. Այլ դեբիտորական պարտքեր	9 718	4 721
7. Շահութահարկի գծով	1 025	0
Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ		
Զուտ առևտրային դեբիտորական պարտքեր	**10 164**	**6 102**
Ընդամենը	**20 987**	**6 102**

4.4 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31.12.23թ.	31.12.22թ.
Դրամարկղ	0	14 068
Բանկային հաշիվներ	8 129	16 355
Ընդամենը	**8 129**	**30 423**

4.5. Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի զուտ գումարը

4.5.1

Կանոնադրական կապիտալի միակ բաժնեմասի անվանական արժեքը կազմում է 50,000դրամ:

Հաշվետու տարում չի կատարվել կանոնադրական կապիտալի համալրում (կամ նվազում)

4.5.2 Եր գնված բաժնետոմսեր չկան:

4.5.3 Շահաբաժիններ

	31.12.23թ.	31.12.22թ.
Տարվա ընթացքում առաջարկված և վճարված շահաբաժիններ		**37 900**

4.6 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

000 դրամ

	31.12.23թ.	31.12.22թ.

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր, այդ թվում	**7 376**	**16 575**
1. Ստացված կանխավճարներ	0	0
2. Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	2 984	9 985
3. Կրեդիտորական պարտքեր ասոցացված կազմակերպությունների հետ		
4. Կրեդիտորական պարտքեր այլ կապակցված կազմակերպությունների գծով		
5. Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով, այդ թվում	2 693	4 035
• *ԱԱՀ*	2 178	3 700
• *Եկամտային հարկ*	475	314
• *Գույքահարկ*		
• *Հողի հարկ*		
•*Այլ պարտադիր վճար*	40	21
6.Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով		213
7. Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	60	
8. Կրեդիտորական պարտքեր պարտադիր սոց.ապ.գծով	58	28
9. Այլ կրեդիտորական պարտքեր	1 581	2 314

Ընկերությունը գործառնական վարձակալությամբ վարձում է գրասենյակային տարածք և մարդատար ավտոմեքենաներ: Վարձակալության միջին ժամկետը երեք տարի է՝ նույն ժամանակաշրջանի ընթացքում ֆիքսված վարձավճարով: 2023թվականին որպես ծախս է ճանաչվել 9 360 հազար դրամ և 2022 թվականին՝ 6 860 հազար դրամ վարձավճար:

4.6.1 Շահութահարկի գծով ծախս

000 դրամ

	31.12.23թ.	**31.12.22թ.**
Ընդամենը, այդ թվում	**162**	**1 355**
Ընթացիկ հարկ	188	1 510
Հետաձգված հարկ	-26	-155
	162	1 355

4.7. Հասույթ

000դրամ

	31.12.23թ.	**31.12.22թ.**
Աուդիտորական ծառայությունների մատուցումից	65 526	58 539

Հաշվապահական և խորհրդատվական ծառայությունների մատուցումից	683	600
Համաձայնեցված ընթացակարգերի մատուցումից		1 657
Ընդամենը	**66 209**	**60 796**

4.8. Վաճառքի ինքնարժեք

	31.12.23թ.	**31.12.22թ.**
Փոխհատուցումներ աշխատակիցներին	16 685	9 015
Մաշվածության ծախս	1 670	1 725
Նյութական ծախսեր	1 404	1 815
Այլ ծախսեր	31 689	26 170
Ընդամենը	**51 448**	**38 725**

4.9.Այլ եկամուտներ

	31.12.23թ.	**31.12.22թ.**
Այլ եկամուտներ	1222	2
Ընդամենը	**1222**	**2**

4.10 Վարչական ծախսեր

000դրամ

	31.12.23թ.	**31.12.22թ.**
Փոխհատուցումներ աշխատակիցներին	7 509	4 179
Հիմնական միջոցների մաշվածության, նորոգման և սպասարկման գծով ծախսեր	42	52
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	2 838	4 059
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	3	
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	131	90
Բանկային ծառայությունների ծախսեր, ապահովագրության ծախսեր	324	270
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	37	93

Վարչական այլ ծախսեր	2 801	2 485
Ընդամենը	**13 685**	**11 228**

4.11 Այլ ծախսեր

	31.12.23թ.	31.12.22թ.
1. Իրացման ծախսեր		
2. Գործառնական այլ ծախսեր	1585	1605
Ծախսեր տույժերից, տուգանքներից, դատական ծախսեր	31	36
Գործառնական այլ ծախսեր	1554	1569
Դուրս գրված անհուսալի դեբիտորական պարտքեր	0	0
3. Այլ ոչ գործառնական ծախսեր	0	2310
Հիմնական միջոցների օտարումից վնաս		2310
Ընդամենը	**1585**	**3915**

5.Ֆինանսական գործիքներ

5.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.15-ում:

5.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

000դրամ

	31.12.23թ.	**31.12.22թ.**
Փոխառություններ	7 894	4 721
Դեբիտորական պարտքեր	6 563	1 363
Մնացորդը դրամարկղում և բանկում	8 129	30 423
Այլ ֆինանսական ակտիվներ	0	0
Ընդամենը	**22 586**	**36 507**

Ֆինանսական պարտավորություններ

	31.12.23թ.	**31.12.22թ.**
Վարկեր և փոխառություններ		1 200
Այլ ֆինանսական պարտավորություններ	205	209
Ընդամենը	**205**	**1 409**

Տես՝ ծանոթագրություն 3.15-ը՝ յուրաքանչյուր ֆինանսական գործիքի կատեգորիայի գծով հաշվապահական հաշվառման քաղաքականության նկարագրության համար:

6. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ընկերությունն իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է պարտքային և իրացվելիության ռիսկերի:

7.Ֆինանսական ռիսկի գործոններ

7.1 Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը ֆինանսական կորուստներ կարող է կրել: Ընկերությունը առևտրային դեբիտորական պարտքերի դիմաց երաշխիքներ չի պահանջում:

7.2 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը վերաբերում է Ընկերության կողմից իր պարտվորությունները ժամանակին մարելուն և անմիջականորեն կապված է Ընկերության դրամական միջոցների հավաքագրման հետ, ինչը նկարագրված է վերը նշված պարտքային ռիսկերում:

8. Իրական արժեք

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

9. Պայմանականություններ

9.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում:

Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով և միջազգային տնտեսական ճգնաժամը:

Ընկերության վրա այս գործոնների հնարավոր հետևանքները կարող են ներառել բնակչությունից դեբիտորական պարտքերի ժամանակին հավաքագրումը, խաթարված հեղինակությունը, ապրանքների և ծառայությունների վաճառքի, ինչպես նաև ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված դժվարությունները և այլն: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Ընկերության իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա տարակուսանքներն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա:

Հետևաբար, Ընկերության ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ճշգրտումների ազդեցությունը, եթե այդպիսիք կան, որոնք կարող էին անհրաժեշտ համարվել, եթ ներկա համաշխարհային ճգնաժամի ազդեցությունը Հայաստանում նկատելի և արժանահավատորեն գնահա լիներ:

10. Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը՝ իր ակտիվների և գործունեության ընդհատման արդյունքում հասցված վնասի ապահովագրություն չունի: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական դրության վրա:

11. Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա է են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենք լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոնշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկ քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապասխան հատկացումներ՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիմա վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

Ընկերության վրա այս գործոնների հնարավոր հետևանքները կարող են ներառել բնակչությունից դեբիտորական պարտքերի ժամանակին հավաքագրումը, խաթարված հեղինակությունը, ապրանքներ ծառայությունների վաճառքի, ինչպես նաև ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված դժվարությունները և այլն:

Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Ընկերության իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկ տարակուսանքներն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվա թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության ակտիվների և

պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա: Ընկերության վրա այս գործոնների հնարավ
հետևանքները կարող են ներառել բնակչությունից դեբիտորական պարտքերի ժամանակին
հավաքագրումը, խաթարված հեղինակությունը, ապրանքների և ծառայությունների վաճառքի, ինչպես
ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված դժվարությունները և այլն: Բոլոր այս խնդիրներ
կարող են հանգեցնել Ընկերության իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել
անընդհատության խնդիրներ: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա
տարակուսանքներն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվա
թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության ակտիվների և
պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա: